

Հաստատված է

գիտական խորհրդի 2010թ. հուլիսի 8-ի թիվ 5 նիստում:



Ռեկտոր

Ա. Ն. Միննյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունը (այսուհետև՝ Վարչություն) Երևանի պետական համալսարանի (այսուհետև՝ ԵՊՀ) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և ԵՊՀ կանոնադրության ու սույն կանոնադրության հիման վրա:

1.2. Վարչությունը կարող է փոփոխել կարգավիճակը կամ դադարեցնել գործունեությունը ԵՊՀ ռեկտորի ներկայացմամբ՝ ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

1.3. Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

1.4. Վարչությունը ունի ձևաթուղթ:

2. Խնդիրներն ու գործառույթները

Վարչության խնդիրներն ու գործառույթներն են՝

2.1. պլանավորել, կազմակերպել և վերահսկել ՋԼՄ-ների, ՀԿ-ների և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ տեղեկատվության փոխանակման և համագործակցության գործընթացը,

2.2. վերլուծել լրատվամիջոցներում համալսարանի, կրթության և գիտության ոլորտի կարևոր խնդիրների մասին հրապարակված և հեռարձակված նյութերը, տեղայնացնելով դրանք՝ ներկայացնել և ապահովել համապատասխան ընթացք (ներկայացնել ԵՊՀ ղեկավարությանը, արձագանքել, պարզաբանել՝ հիմնվելով համապատասխան ստորաբաժանումներից ստացված եզրակացությունների վրա և այլն),

2.3. աշխատանքներ կատարել համալսարանի մասին հասարակական կարծիքի ու դրական վարկանիշի ձևավորման ուղղությամբ՝ ներհամալսարանական ընթացակարգերի, աշխատառճի, ներքին էթիկական, վարվելակերպի և այլ խնդիրների վերաբերյալ մեթոդական ուղեցույցների մշակման և ներդրման և այլ աշխատանքների միջոցով,

2.4. մեթոդական աջակցություն ցուցաբերել քաղաքացիների ընդունելության, օրենքով սահմանված կարգով նրանց հարցերի, առաջարկությունների, բողոքների, նամակների, դիմումների քննարկման վերաբերյալ,

2.5. նպաստել համալսարանի՝ տեղեկատվության տարածման տպագիր միջոցների զարգացմանը (պաշտոնաթերթ, տարեկան հաշվետվություն, տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ, բացիկներ և այլն),

2.6. Ջարգացնել ԵՊՀ ինտերնետային կայքը, ապահովել նրա օպերատիվ թարմացումները և առցանց հետադարձ կապը:

2.7. Պատրաստել համալսարանի մասին տեսանյութեր ու աուդիոնյութեր և ապահովել դրանց տարածումը:

2.8. Իրականացնել ՀՀ օրենսդրությունից, ԵՊՀ կանոնադրությունից և սույն կանոնադրությունից բխող այլ գործառույթներ:

3. Կառուցվածքը և կառավարումը

3.1. Վարչության աշխատանքները համակարգում է ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորը:

3.2. Վարչությունը կազմված է Լրատվական, Հասարակայնության հետ կապերի, Ինտերնետային ռեսուրսների սպասարկման և կառավարման, Մեթոդական բաժիններից և Ֆոտո-կինո կենտրոնից: Վարչության հաստիքացուցակը հաստատում և դրա մեջ փոփոխություններ է կատարում ռեկտորը՝ վարչությունը համակարգող պրոռեկտորի ներկայացմամբ:

3.3. Վարչությունը գլխավորում է պետը, որին նշանակում և պաշտոնից ազատում է ռեկտորը:

3.4. Վարչության պետը իրականացնում է հետևյալ գործառույթները՝

3.4.1. վարչության կառուցվածքային ստորաբաժանումների անմիջական ղեկավարում և վերահսկում,

3.4.2. ԵՊՀ խորհրդում, գիտական խորհրդում, ռեկտորատում հասարակայնության հետ կապերին և լրատվությանը վերաբերող հարցերի նախապատրաստում և ներկայացում,

3.4.3. հասարակայնության հետ կապերին և ՁԼՄ-ների հետ աշխատանքներին առնչվող՝ ԵՊՀ ֆակուլտետների և կառուցվածքային այլ ստորաբաժանումների կողմից տարվող աշխատանքների կազմակերպում և համակարգում, նշված հարցերին վերաբերող ԵՊՀ հրամանների և նորմատիվ այլ փաստաթղթերի կատարման վերահսկում:

3.5. Վարչության պետը պատասխանատվություն է կրում Վարչության աշխատանքների որակի և Վարչության խնդիրների ու գործառույթների կատարման համար:

4. Անցումային դրույթներ

4.1. Սույն կանոնադրության 3.2. կետով սահմանված Վարչության կառուցվածքը ուժի մեջ է մտնում ԵՊՀ ռեկտորի հրամանով Վարչության նոր հաստիքացուցակը հաստատելու պահից: